ՀՏԴ 72.01

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Ա.Ս.Քարամյան,
Ա.Յու.Սաֆարյան,
Կ.Ռ.Ազատյան,
Ա.Գ.Թարխանյան

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՏԱՀՂԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ՀՈՐԻՆՎԱԾՔԻ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

Դիտարկվում են քաղաքային միջավայրի դինամիկ զարգացմանն անհրաժեշտ ֆակտորներն ու գոյություն ունեցող ճարտարապետական տարածական միջավայրի նոր մոտեցումներով կազմակերպման և գործնական կիրառման հնարավորությունները: Ճարտարապետությունը, որպես միջավայրի ամենախոշոր տեսողական տարր, դրա հագեցվածությունը մտահղացման ծավալատարածական ձևերի, արվեստի կերտվածքներով, ինչպես նաև աչքի ընկնող դիզայներական հորինվածքներով և այլ տարրերով, դրական ազդեցություն է ունենում մարդու հոգեվիճակի վրա: Ներկայացվում են մագիստրանտների նախագծային աշխատանքների որոշ օրինակներ:

Առանցքային բառեր. *քաղաքային միջավայր, ինտենսիվ շարժումներ, ենթակառուցվածքային կատարյալ մտահղացում, տեսողական ընկալում, տեսաէկոլոգիա, տրանսֆորմացվող դինամիկ միջավայր*

Այսօր, գրեթե համատարած, երկիր մոլորակն ապրում է մի այնպիսի խելահեղ ժամանակաշրջան, երբ քաղաքական և տնտեսական զարգացումների բոլոր սխեմաները անհաջողությամբ են ավարտվում կամ մեծ հիմնախնդիրներով, դժվարություններով ու դանդաղ ընթացքով առաջ ընթանում: Այս գլոբալ նկարագրում միայն առանձնանում են խաղաղօվկիանոսյան ավազանի տնտեսական արագ վերելք ապրող որոշ երկրներ, որոնց համակողմանի և աննախադեպ զարգացումները պայմանավորված են մի շարք բաղկացուցիչների համալիրի փոխհամաձայնեցված գործողություններով: Գիտության, ճարտարապետության և շինարարության, ագրոարդյունաբերական, առևտրատնտեսական, կրթական, բժշկական և մյուս համալիրներում մեծապես կիրառվում են նորագույն բարձր տեխնոլոգիաներ և համաշխարհային շուկայի մարկետինգի ուսումնասիրությունների արդյունքում առաջադրվում են արագ կողմնորոշումներ: Այս պայմաններում խոշոր բնակավայրերը՝ հատկապես մայրաքաղաքներն ավելի են մեծանում տարածքային, բնակչության թվաքանակի առումներով, ինչպես նաև դրանց շուրջը գոյանում և զարգանում են փոքր բնակավայրերի խիտ ցանց, որտեղ մեծ բնակավայրերի բոլոր հնարավորություններն առավել արդյունավետ են օգտագործվում [1]: Որպես օրենք, բնակավայրերի ճարտարապետական կերպարի վերակառուցումները, քաղաքաշինական կազմակերպումն ու

ժամանակակից պահանջներին համապատասխան զարգացումներն անմիջականորեն կապված են երկրի տնտեսական համալիրի վերընթացից, հակառակ դեպքում դրանք վեր են ածվում ինքնանպատակ, ինքնաբավարար ձևափոխությունների և ներդաշնակ համակարգից դուրս օբյեկտների:

Աշխարհաքաղաքական բարդ պայմաններում գտնվող մեր փոքր երկրում նշված փոփոխություններն ավելի արագ և ակնհայտ են դարձել հատկապես վերջին մի քանի տասնյակ տարիներին: Անկում ապրող տնտեսությունը լուրջ պատճառ դառնալով գործազրկության և արտագաղթի, դեպի մայրաքաղաք ձգեց արվարձանների բնակչությանը՝ առավել նպաստելով փոքր բնակավայրերի, սահմանամերձ գոտիների դատարկմանը: Գտնվելով Երևանյան ագլոմերացիայի կենտրոնական գոտում, բնականորեն արդեն շրջապատված լինելով միջին և փոքր բնակավայրերի խիտ ցանցով (համատարած տնտեսապես թույլ զարգացած), ք.Երևանը հատկապես զարգացավ տարածքային առումով և արդեն ձևավորված քաղաքային միջավայրի կառուցապատման խտացմամբ, կանաչ տարածքների վերացմամբ: Նորագույն տեխնոլոգիաները, տեղափոխությունների համակարգը, տարաբնույթ կապերի և հաղորդակցությունների արագացումները, խոշոր ենթակառույցներն ու դրանց գործունեության հետ կապված մեթոդներն ու գործողություններն անմիջականորեն ներազդում են բնակչության վրա: Նոր հաղորդակցուղիները հատկապես ներազդում են ճարտարապետության, քաղաքային միջավայրի՝ ամբողջ բնակավայրի վրա բոլոր առումներով, որի թվում ժամանակի և տարածական միջավայրի մեր կողմից օգտագործելու նախկին սովորույթների վրա [2]:

Տեխնոլոգիական կերպափոխումները սահմանազատելով առանձնացված տարածքներով առարկայական միջավայրը մի նոր՝ ոչ շոշափելի տարածական միջավայրից, որի կառուցվածքը կազմակերպման ցանկացած մակարդակում որոշվում է հաղորդակցական կապերով, համացանցով և՝ էլեկտրոնային հոսքերով, մեր փոխադարձ կապերի աշխարհը դարձնում են անմարմին: Զարգացման աստիճանով և համատարածությամբ մեզ մոտ դեռևս մեծ տեղ չգտած այդ միջավայրը գիտության և գործողությունների, նյութի և ձևի, մարդկանց և նրանց ապրելու միջավայրի միջև շատ ավելի հոսուն, ճկուն փոխհարաբերությունների աշխարհ է:

Մի կողմից նորագույն տեխնոլոգիաները, էլեկտրոնային փոխադարձ կապերը, ճարտարապետական միջավայրի ինտենսիվ զարգացման ընթացքում մասշտաբների գերաճը, որոնք արդյունաբերության, էկոնոմիկայի և տրանսպորտի աճող պահանջների արդյունքն են, հակասության մեջ են մտնում ճարտարապետության սպառողի՝ մարդու հետ նրա կենսագործունեության միջավայրի ընկալման ընթացքում: Դա անցում է ստատիկ ընկալումից, անփոփոխից դեպի դինամիկ, այսինքն, առավել ճկուն, փոփոխական և շարժուն ընկալմանը: Ճարտարապետության առումով խնդիրը հանգում է քաղաքային միջավայրի ներդաշնակեցմանը, որի պատճառով մեծ հետաքրքրություն է ներկայացնում միջավայրի ընկալումը՝ դրա գրաֆիկական պատկերման միջոցով [3]: Հաշվի առնելով մարդու նկատմամբ նշված ժամանակակից գլոբալ ցնցումները, այսօր տարածական միջավայրի ընկալման

վերաբերյալ հետազոտությունները կատարվում են էկոլոգիական տեսակետների կարևորմամբ, որով բացատրվում է տարածական միջավայրային մոտեցումը: Ճարտարապետական միջավայրը, որպես ամենախոշոր տեսողական տարր, դրա հագեցվածությունը ճարտարապետության և արվեստի կերտվածքներով, ինչպես նաև աչքի ընկնող դիզայներական հորինվածքներով և այլ տարրերով դրական ազդեցություն է ունենում մարդու հոգեվիճակի վրա: Ճարտարապետության առումով համալիր միջավայրի ընկալման խնդրի լուծումը հանգում է կենսագործունեության՝ ամենատարբեր գործառույթներ իրականացնելու համար կոչված միջավայրի առավել ներդաշնակ կազմակերպմանը, մեծ հետաքրքրություն ներկայացնող գրաֆիկական և դիզայներական միջոցների կատարելագործմանը:

Արագ ձևավորվող նոր աշխարհում շատ կարևոր է պահպանել և զարգացնել ճարտարապետության և մշակույթի արդեն իրենց տեղն ունեցող արժեքները, մանավանդ որ դրանք ճարտարապետական ձևերի և ֆունկցիոնալ առումներով չէն կորցրել իրենց արդիականությունը, բայց ֆիզիկապես մաշվել են՝ դուրս մնալով ուշադրությունից:

Ք.Երևանի մայրուղային տրանսպորտային զարկերակների՝ Մաշտոցի պողոտայի և Խորենացու փողոցի հատման գոտում խորհրդային տարիներին վաստակաշատ ճարտարապետ Աշոտ Ալեքսանյանի կողմից նախագծվել և իրականացվել է համալիր լուծումներով հագեցած մի գետնանցում, որը կարող է ցանկացած զարգացած երկրի մեծ քաղաքի համար հպարտության առարկա հանդիսանալ (նկ.1): Տարածական միջավայրում բազմաթիվ կետերից հետիոտնի մոտեցումները, տրանսպորտի ներթափանցման կապը, սանիտարահիգիենիկ ենթակառուցվածքները միշտ բնորոշել են այս միջավայրի բարձր արժեվորությունը, որը նախկինում ծառայել է որպես անցումներ դեպի վերգետնյա հարող տարածքների բնակելի և կարևոր հասարակական գոտիներ (Ս Սարգիս եկեղեցին, Փակ շուկան, նախկին քաղաքապետարանը և այլն), ինչպես նաև առևտրի օբյեկտների ստորգետնյա փոքր համալիր: Տարիներ շարունակ ճարտարապետական զուսպ ձևերով կազմակերպված այս կոնստրուկտիվ արժեքավոր միջավայրը դարձել է զուտ ստորգետնյա անցում՝ անհրապույր, վանող արտահայտությամբ, մաշված և կիսավեր կառուցվածքով:



Նկ. 1. Մաշտոցի պողոտայի և Խորենացու փողոցի խաչմերուկի գետնանցումը (ուսանողական չափագրություն)



Նկ. 2. Մաշտոցի պողոտայի և Խորենացու փողոցի խաչմերուկի գետնանցում



Նկ. 3. Մաշտոցի պողոտայի և Խորենացու փողոցի խաչմերուկի գետնանցման վերականգնման և մոդեռնիզացման ուսանողական հայեցակարգային նախագիծ, 2015թ.

Նկ. 4. Տերյան փողոցի ճարտարապետական միջավայրի մոդեռնիզացման ուսանողական նախագիծ (Կորյուն–Իսահակյան փողոցների հատվածում)

Նկ. 5. Մաշտոցի պողոտայի և Խորենացու փողոցի խաչմերուկի գետնանցման մոդեռնիզացման ուսանողական հայեցակարգային նախագիծ, 2016թ.

Մեր գիտակցությունն անվերջ ձգտում է ներդաշնակության՝ հոգու, առարկայի և շրջապատի հետ և կենսագոյության ցանկացած աններդաշնակություն առաջացնում է հոգեբանական որոշակի զգացումներ և պահանջներ: Այդ զգացումները ստիպողաբար առաջացնում են իրենց և բնության միջև միասնությունն ու հավասարակշռությունը բավարարելու պահանջ՝ համաձայն ճարտարապետության տեսության հիմնական բանաձևերից մեկի - համալիր ամբողջականություն ձևերի, գործառույթների գեղարվեստական արժեքների միջև՝ արտահայտված ճարտարապետական դիզայնի միջոցներով, քանի որ ճարտարապետության մեջ գեղարվեստական-հուզականն անբաժանելի է հուսալիության և ֆունկցիոնալ խնդիրներից: Բոլոր ժամանակներում գոյություն ունեն տարաձայնություններ ֆունկցիոնալ լուծումների կողմից ճարտարապետական կերպար առաջադրելու գաղափարի վերաբերյալ, սակայն հետազոտվող արդեն իսկ կազմավորված ճարտարապետական տվյալ միջավայրը կարծես թելադրում է բազմաթիվ տարաբնույթ գործառույթների գաղափարներ, որոնցից յուրաքանչյուրն առանձին-առանձին իրականանալի կարող է դառնալ դինամիկ հատակագծային մտահղացումների դեպքում:

Ստորգետնյա ուրբանիզացիայի այս փոքր հատվածը, որ տրանսպորտային հաղորդակցուղիների խաչմերուկի անցումային կետերում, որպես բաց գիրք, հրաշալի համայնապատկերներ է բացում դեպի Հրազդանի ձորը, Արարատը, Ս Սարգիս եկեղեցին, ծառայում է որպես զուտ անվտանգ անցումային գոտի, մինչդեռ դա կարող է դառնալ մայրաքաղաքում զբոսաշրջության հետաքրքիր ուղիներից մեկը, ինչպես նաև բազմաֆունկցիոնալ գործառույթների իրականացման միջավայր: Այս միջավայրն այսօր առավել արժեվորվել է հասարակական այնպիսի կառույցների հարևանությամբ, ինչպիսիք նոր

քաղաքապետարանն է, դեսպանատները, հյուրանոցները, պետական առևտրային կազմակերպությունները և այլն (նկ. 2-4):

Կարծում եմ այս գիտակցությամբ են ՃՇՀԱՀ ավարտական կուրսի մագիստրանտները, որպես ստուդիայի աշխատանք դիտարկել քաղաքի այս և բազմաթիվ այլ հատվածներ՝ դրանց վերականգնման մոդեռնիզացման և զարգացման իրենց առաջարկները ներկայացնելով հայեցակարգային նախագիծ-առաջարկի ձևով՝ հուսալով, որ նման մոտեցումները մի օր իրականություն կդառնան (նկ.5):

А.С.Карамян,
А.Ю.Сафарян,
К.Р.Азатян,
А.Г.Тарханян

ЗАДАЧИ ВЗАИМОСВЯЗАННОСТИ АРХИТЕКТУРНОГО ЗАМЫСЛА И ПЛАНИРОВОЧНОЙ СТРУКТУРЫ В ПРОСТРАНСТВЕННОЙ СРЕДЕ

Рассматриваются факторы, необходимые для динамичного развития городской среды, и возможности организации и применения новых подходов для существующей архитектурной пространственной среды. Архитектура в целом, как визуально самый крупный элемент среды с комплексными формами объемно-планировочных решений, творениями исскуства, а также выделяющимися дизайнерскими замыслами и другими элементами, имеет позитивное влияние на психологию человека. Представляются некоторые примеры студийных работ студентов последнего курса магистратуры.

Ключевые слова: *городская среда, интенсивные передвижения, инфраструктурно завершенный замысел, визуальное восприятие, визуальная экология, трансформируемо-динамичная среда*

A.S.Qaramyan,
A.Yu.Safaryan,
K.R.Azatyan,
A.G.Tarkhanyan

ISSUES OF INTERRELATEDNESS BETWEEN ARCHITECTURAL INTENTS AND PLANNING STRUCTURE IN THE SPATIAL MILIEU

Factors required for the dynamic development of the urban environment, and the possibilities of organizing and applying new approaches to the existing architectural spatial environment are under consideration. In general, architecture as the largest visual media element of the environment, with its complex forms of space-planning decisions, creations of art, as well as design ideas, has a positive influence on human psychology. Some examples of studio works of MA course graduate students are presented.

Keywords: *urban environment, violent (intensive) movement, infrastructurally completed idea (plan), visual perception (comprehension), visual ecology, variable (flexible) dynamic environment, functionally used complex*

Գրականություն

1. **Jane Jakobs.** Cities and the wealth of nations. - New York: A Division of Random House, 1984. - P. 19-25, 70-71.
2. **Уильям Митчелл.** Я плюс плюс/ Институт медиа, архитектуры и дизайна "Стрелка". - М., 2012. - С. 12-15.
3. **Քարամյան Ա.Ս.** Տեսողական և հոգեբանական ընկալման նշանակությունը ճարտարապետական տարածական միջավայրում// ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ. – Երևան, 2015. – Հ.1(56). – էջ.52-55:

Աշխատանքն իրականացված է ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ «ՀՀ ճարտարապետական և շինարարական համալիրների կայուն զարգացման ուղիների բացահայտում, ճշգրտում, ներդրման առաջարկություններ և հանձնարարականների մշակում՝ մշտական մոնիտորինգի կիրառմամբ» ծրագրի շրջանակում:

Քարամյան Անահիտ Սերգեյի, ճարտ. թեկն., պրոֆ. *(ՀՀ, ք.Երևան) - ՃՇՀԱՀ, - ՃՇՀԱՀ, ակ. Ալ. Թամանյանի անվ. ճարտարապետության և շինարարության պրոբլեմային լաբորատորիա, գ.ա., ճարտարապետական նախագծման և ճարտարապետական միջավայրի դիզայնի ամբիոն, (+374)91957001, anarchitect@mail.ru,* ***Սաֆարյան Աշոտ Յուրիի, ճ.թ., ասիստենտ,*** *(ՀՀ, ք.Երևան) – ՃՇՀԱՀ, ակ. Ալ. Թամանյանի անվ. ճարտարապետության և շինարարության պրոբլեմային լաբորատորիա, գ.ա., ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժառանգության վերականգման, վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոն, (+374)77700904,* ***Ազատյան Կարեն Ռուբենի, ճարտ. թեկն., դոց.*** *(ՀՀ, ք.Երևան) - ՃՇՀԱՀ, ակ. Ալ. Թամանյանի անվ. ճարտարապետության և շինարարության պրոբլեմային լաբորատորիա, գ.ա., ճարտարապետական նախագծման և ճարտարապետական միջավայրի դիզայնի ամբիոն, (+374)55774607, karenazatyan77@gmail.com,* ***Թարխանյան Արտավազդ Գուրգենի,*** *(ՀՀ, ք.Երևան) – ՃՇՀԱՀ, ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժառանգության վերականգման, վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոն, հայցորդ, (+374)93545213, artavazd84@gmail.com:*

Карамян Анаит Сергеевна, канд.арх., проф. *(РА, г.Ереван) - НУАСА, Проблемная лаборатория Архитектуры и строительства им. ак. Ал. Таманяна, н.с, кафедра Архитектурного проектирования и дизайна архитектурной среды, (+374) 10565390; (+374) 91957001, anarchitect@mail.ru,****Сафарян Ашот Юрьевич, канд.архит., ассистент,*** *(РА, г.Ереван) - НУАСА, Проблемная лаборатория Архитектуры и строительства им. академ. Ал. Таманяна, н.с., кафедра Теории архитектуры, реставрации и реконструкции историко-архитектурного наследия, изящных искусств и истории, (+374)77700904,* ***Азатян Карен Рубенович, канд. арх., доц.*** *(РА, г.Ереван) - НУАСА, Проблемная лаборатория Архитектуры и строительства им. ак. Ал. Таманяна, н.с, кафедра Архитектурного проектирования и дизайна архитектурной среды. (+374)55774607, karenazatyan77@gmail.com,* ***Тарханян Артавазд Гургенович,*** *(РА, г.Ереван) - НУАСА, кафедра Теории архитектуры, реставрации и реконструкции историко-архитектурного наследия, изящных искусств и истории, соискатель, (+374)93545213, artavazd84@gmail.com.*

Qaramyan Anahit Sergey, PhD in Architecture, prof. *(RA, Yerevan) - NUACA, Chair of Architecture Drafting and Design of Architectural Environment. (+374)91957001, anarchitect@mail.ru,* ***Safaryan Ashot Yuri, doctor of philosophy (Ph.D.) in Architecture, associate prof.*** *(RA, Yerevan) – NUACA, Research Laboratory of Architecture and Construction by Academician Al. Tamanyan, researcher, Chair of Theory of Architecture, Restoration and Reconstruction of Historical-Architectural Heritage, Fine Arts and History, (+374) 77700904,* ***Azatyan Karen Ruben, PhD in Architecture, associate professor*** *(RA, Yerevan) - NUACA, Chair of Architecture Drafting and Design of Architectural Environment, (+374)55774607, karenazatyan77@gmail.com,* ***Tarkhanyan Artavazd Gurgen*** *(RA, Yerevan) – NUACA, Chair of Theory of Architecture, Restoration and Reconstruction of Historical-Architectural Heritage, Fine Arts and History,applicant, (+374)93545213, artavazd84@gmail.com.*

Ներկայացվել է՝ 04.11.2016թ.
Ընդունվել է տպագրության՝ 12.11.2016թ.